— Մե՞ծ էր այն աղջիկը:

— Տես, այսքան բարձր էր ինձանից: — Նա ձեռքը տարաւ դէպի գլուխը եւ կէս արշինի չափ վեր բռնեց: — Մինչեւ այսօր էլ Գիւլին ինձ հետ ոխ ունի, ասում է՝ քեզ մի օր պէտք է սպանեմ: Հողե՛մ դրա սարսաղ գլուխը, լաւ՛ մարդու է սպանում... Ինչ՛ նրա ատամների խարջն եմ...

Վերջին խօսքերը Մարօն արտասանեց մի առանձին հպարտութեամբ: Նա շարունակեց.

— Ախար, քրդերը ամէնն այսպէս են, հէնց որ նրանցից վախենում ես, գլխիդ նստում են: Մի անգամ ձեռքիդ ուժը ցոյց տոեցիր, էլ մօտ չեն գայ: Այն օրից մեր հաւերից եւ ոչ մէկը չի կորել: Է՛հ, ինչքան խօսեցի ես... հիմա դու կ'ասես՝ կոտրած ջաղացի պէս չըխկչըխկում է...

— Չէ՛, ես այսպէս չեմ ասի. ես կ'ասեմ՝ դու շատ լաւ աղջիկ ես:

— Դրո՞ւստ:

— Քո արեւը գիտենայ:

— Բաս բե՛ր ականջիդ մի բան ասեմ:

Ես ականջս մօտ տարայ նրա բերնին. նա ինչ-որ փսփսաց, եւ ես զգացի, որ ջերմ շրթունքները կպան իմ երեսին...

Լ. ՔՐԴՈՒՀԻՆ ԵՒ ՀԱՅՈՒՀԻՆ

Առաւօտեան ես զարթեցայ խիստ վաղ: Իմ սենեակի պատուհանից տեսայ, — կովերը բակումը կանգնած էին, Մարօն կթում էր նրանց: Նրա շապիկի թեւքերը ծալած էին, եւ ձեռքերի բազուկները մինչեւ արմունկը մերկ էին: Ինչ՛ գեղեցիկ էին այն լիքը, կլորիկ բազուկները: Ես ագահ աչքերով մտիկ էի անում: Գոգնոցը կապած չէր, եւ շապիկի օձիքի ճեղքից երբեմն դուրս էր նայում սիրուն կուրծքը: Նա վարսակալի նման մի սեւ բան կապել էր բաց գլխին, եւ նրա տակից խիտ ծամերը փռփռում էին առաւօտեան հովի հետ: Մարօն երբեք չէր երեւացել ինձ այնքան հրապուրիչ, որպէս այն առաւօտ: Նա իր կարմիր շապիկի մէջ, որ իջնում էր մինչեւ ոտքերը, ներկայացնում էր հովոական կեանքի մարմնացած անմեղութիւնը:

Նա վերջացրեց իր գործը եւ սկսեց կովերը քշել դէպի նախիրը:

Խաթունը — ծերունի որսորդի տնակալուչ պառաւը, — զբաղոած էր թոնիր վառելով: Հասօի կինը, որսորդի հարսը, ծածկեալ ուրոականի նման, լուռ եւ մունջ, պտըտում էր թոնրի շուրջը, պառաւի զանազան պատվները կատարելով: Այնքան ժամանակ ես չկարողացայ տեսնել այս կնոջ երեսը կամ